

ԻՄԱՍՏԱՄԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՆԵՐՍՈՅԵԱՆ

ՄԻ ՅԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ (ՊԱՐԱԴՈՐՍ)

Ասեմն ասելորդ է, որ անհատի եւ հասարակութեան կեանքում ժամանակի եւ տարածութեան հետեւանքներից լիակատար ապատակրում չի կարող լինել: Բանի դեռ մենք՝ մահկանացուներս, իրապէս ենք մեր մահկանացու լինելու փաստին եւ մեր կեանքը այս մակարդակի վրայ է, ապա մենք երբեք չենք կարող դրախտ վերստեղծել: Այս աշխարհում իդէալական հասարակութիւն մեզ չի սպասում՝ ո՛չ ժամանակի երկարութեան մէջ, ո՛չ՝ վերջաւորութեանը: Յիսուս յայտարարեց, թէ ոչ մի հասարակութիւն չի կարող ապառ լինել գայթակղութիւններից եւ սայթաքումներից: Սա ասում է՝ կարծես թէ հիմնաւորելու Իր տեսակէտը՝ ընդդէմ Հին Կոստկարանում իշխող այդ ուղղութեան: Պատմութիւնը նշում է միշտ դրանցով: Գայթակղութիւնը, անտարակոյս, յայտնւում է - բայց վա՛յ նրան, որի միջոցով այն պիտի յայտնուի, - ասաց Յիսուս:

Սա արդէն ապշեցուցիչ յարակարծութիւն է: Ասում է, թէ գայթակղութիւնները լինում են Աստծու կամքով, հենց իրերի կառուցումների մէջ, բայց եւ այնպէս, Աստուած խորապէս դժգոհ է նրանցից, որոնց միջոցով կառարում են գայթակղութիւնները: Հետեւելով Յիսուսին՝ մենք կարող ենք ընդարձակել յարակարծութիւնը եւ ասել, թէ աղքատութիւնը միշտ պիտի լինի, բայց վա՛յ նրանց, ովքեր ճիգ չեն թափում աղքատութիւնը մաքրել երկրի երեսից:

Եթէ գայթակղութիւնը եւ աղքատութիւնը անխուսափելիօրէն կան՝ որպէս մարդկութեան պատմութեան հիստուածքի մաս, ինչպէ՞ս կարող ենք մեղադրել նրանց, որոնց միջոցով այդ բաները տեղի են ունենում: Ինչպէ՞ս բացատրենք այս երեւոյթը:

Այդ մեր՝ բոլորիս միջոցով է, որ գայթակղութիւնները եւ աղքատութիւնը յայտնւում են, եւ վա՛յ մեզ, որ չենք աշխատում վերացնել այս արատները երկրի երեսից: Յարակարծութիւնը, որի մասին խօսում ենք, աշխատելու անհրաժեշտութեան մի տարբերակն է՝ ժամանակի եւ տարածութեան չափերի սահմանում, որպէսզի ապառ լինենք հենց այդ սահմանափակումներից: Գայթակղութիւնները եւ աղքատութիւնը ուղղակի այդ սահմանափակումների հետեւանք են:

Ըստ Նոր Ուխտի՝ ոչ մի ազգութեան չի տրուած երկիրը իր պատկերի համաձայն վերածելու իրաւունքը: Միեւնոյն ժամանակ, իւրաքանչիւր ազգի ներսում, իւրաքանչիւր քրիստոնէայի պարտականութիւնն է հետեւել, թէ Աստծու կամքը կատարում է այնպէս, ինչպէս որ այն յայտնուեց Իր մարդացեալ Որդու կեանքի եւ պատգամների ընթացքում: Աստծու կամքի կատարումը ինքնին եպակի նպատակ է: Յուսով ենք, որ ներկայիս Աստծու կամքի համաձայն ապրելու համար լաւ եւ առողջ հասարակութեան կազմութիւնը ժողովրդի վճռականութեան հետեւանքը կը լինի: Եկեղեցին պէտք չէ խիստ քաղաքական (աշխարհիկ) մտադրութիւններ եւ ծրագրեր ունենայ, ինչպէս Յիսուս Ինքը չունէր: Չնայած եկեղեցու պարտականութիւնն է՝ քաջալերել եւ սատար կանգնել այնպիսի գործերին, որոնք ատելի նպատակում են՝ երեւան բերելու Աստծու թագաւորութիւնը, մի թագաւորութիւն, որը պէտք է ստեղծուի իւրաքանչիւր անհատի ներսում:

Անհատը չի կարող լինել Բրիտոսի Մարմնի քաղաքացի, եւ ոչ էլ, Աստծու գործակալը լինել օգոսապաշտ նպատակներով, չնայած այդպիսի գործակալութիւնը նպատակում է ատելի ներդաշնակ հասարակութեան ստեղծմանը: Անհատական կամ

հաւաքական կերպով սիրուած մի բան անելու հետեւանքը կարող է լինել մի քայլ՝ դէպի մասնաւոր դրութեան հիմնադրումը, որտեղ առիւծը եւ զառը պիտի ապրեն միասին, եւ կաթն ու մեղրը պիտի լինեն առատ: Սակայն խաղաղութիւնը եւ բարեկեցութիւնը ուղղակիօրէն փնտրուած պարզեանք չեն նրանց համար, ովքեր կատարում են Բրիտանիայի կամքը: Պարզեւր, պարզ աւած, կենդանի Աստծոց ղեկավարող համանուագի (սինֆոնիայի)՝ ձայնանիշ (նոտա) լինելու հրճումանքն է: Դա Նրա գործն մասնակցութեան ուրախութիւնն է Իր իրականութեան մէջ: Մի բան, որին նախամարդկային արարածները ընդունակ չեն: Յիսուս հրաւիրում է մարդունկնդիրներին՝ իրապէս լինել գերագոյն Աստծոց ղեկավարող անդրանցականութեանը եւ ապրել ու որոշումներ կայացնել դրա համաձայն: Եթէ ձախողուես, ապրարարութիւնը այս է. «դուք կը կործանուէք»:

Եթէ մենք դարձեալ դիմադրենք այդ ապրարարութիւնը, ապա կարող է ցաւալի հարց առաջացնել: Գալիլիացիները ապրուեցին Նիսիւսի պատասխանից: Նրանք որակա՞ն արձագանքեցին: Արդեօ՞ք բաւարարուեցին իրենց հարցին տրուած պատասխանով: Եղա՞ւ այն իրենց համար առաջնորդող սկզբունք: Գուցէ մի քանիսի համար, բայց, անշուշտ, ոչ բոլորի: Ինչպէս յիշում ենք, Գալիլիացիները մօտեցան Յիսուսին՝ փնտրելով իրենց հարցի տրամաբանական եւ ընդհանուրի համար ընդունելի պատասխան: Ինչպէ՞ս կարող է Արդարադատ Աստուած թոյլ տայ, որ Մատանայի սպասաւորները իրագործեն իրենց վայրագ նպատակները: Իսկ ինչու՞ հենց այս մարդիկ Կոհուեցին եւ ոչ ուրիշները: Արդեօ՞ք նրանք եպրակացոյն, թէ աշխարհում չարը պատահական է բաժանուած:

Մենք արդէն նշեցինք, որ Յիսուս ընդարձակում է Գալիլիացիների մտահոգութեան գործունէութեան ոլորտը: Նա Իր պատասխանի մէջ ներառում է այնպիսի ողբերգութիւններ, որոնք անհեշեթ յատահարների պատճառով են տեղի ունեցել: Ապա Յիսուս կորականապէս մերժում է Գալիլիացիների այն ենթադրութիւնը, թէ որոշ մարդիկ պատժում են Աստծու կողմից մարդկային դիտողներին անյայտ պատճառներով, հետեւաբար, ողբերգութիւնը մատնանշում է աւստածային տհաճութիւն (անհաւանութիւն): Յիսուս, որ մերժում է այդ ենթադրութիւնը, միեւնոյն ժամանակ մերժում է նաեւ այն տեսակէտը, թէ Աստուած երկնքում է, թէ չարը աշխարհում պատահում է պատահական կերպով եւ առանց պատճառի: Կրկին Յիսուս ուսուցանում է, որ թէ՛ բարոյական եւ թէ՛ բնական չարիքների Կոհերը պէտք չէ դիտուեն իբրեւ Աստծու կողմից պատժի համար նախատեսուած մարդիկ: Այդպէս Կոհուելը՝ ապաշխարութեան մէջ մարդկանց ձախողուելու հետեւանքն է:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ. ՄԻԱՅԱԾ ՄԵՆՔ ԿԸ ՅԱՆՔԵՆՔ

Բրիտանական տեսանկիւնից հարց չի յարուցում. թէ ինչու *ա՛յս* եւ ոչ թէ *ա՛յդ* մասնաւոր անհատը կամ խումբը միասուեց, որովհետեւ ամէն անձ, իբրեւ անձ, Աստծու համար նոյն կարեւորութիւնը ունի, որքան միւսները: Իր արարած ամէն մի էութեան համդէպ տաճած Աստծու սէրը վերացնում է անձի՝ եւ *այս* անձի՝ միջեւ խորութեան հարցը: *Մենք* պատրոշում ենք սա բարոյական եւ ուրիշ գեղնի վրայ. մենք այսպէս ենք վարում՝ ապահովելու համար խաղաղութեան եւ ապաստութեան մեր իրաւունքները: Միեւնոյն ժամանակ հասկանում ենք նաեւ, որ, ինչպէս Եւայի մարգարէն ներկայացնում է, Աստծու ճանապարհները մեր ճանապարհները չեն, եւ մենք՝ իբրեւ քրիստոնէաներ, մեր պարտականութիւնն է հրաժարուել *մեր*

ճանապարհներից՝ յօգուտ Աստծու: Լուսաբանենք. ենթադրենք մի մայր, որն ունի հինգ երեխայ եւ հաւասարապէս սիրում է իր երեխաներին: Եթէ նրա երեխաներից մէկը պատահականօրէն խեղդուի, ապա մօր մոտով անգամ չի անցնի, թէ ինչու իր երեխաներից *ա՛յս* մէկի եւ ոչ միւսի՝ հետ այդ դէպքը պատահեց, քանի որ նրա համար հաւասարապէս ցաւայի է իր երեխաներից որեւէ մէկի արկածական մահը: Ողբերգութիւնը երեխաներից մէկի կորստեան մէջ է: Եւ ոչ թէ *ա՛յս* կամ *ա՛յն* մէկի: Պէտք է նկատի առնենք նաեւ այն, որ եթէ երեխաներից որեւէ մէկը իրեն նուիրում մօր կամքին անհնապանդ լինելու պատճառով դժբախտութեան հանդիպի, այս պարագայում մայրը պատասխանատու չէ:

Յիսուս սովորեցնում է. ոչ *ա՛յս* ոչ էլ *ա՛յդ* անձը, ոչ *ա՛յս* եւ ոչ էլ *ա՛յդ* ազգը պոհեր պիտի չունենան ապաշխարած մարդկանց աշխարհում, այսինքն՝ մարդիկ, որոնք սեւեռում են ոչ թէ աշխարհի վրայ եւ տենչում են այն ամէնը, ինչ *աշխարհը* մատուցում է նրանց, այլ սեւեռում են Աստծու վրայ եւ ցանկանում են այն ամէնը, ինչ *Նա* կարող է տալ: Նա կարող է տալ խաղաղութիւն, ինչը բոլոր հասկացութիւններից վեր է: Սա պարզապէս իրարանցումի, հակասութեան եւ թշնամութեան պակասից առաջացած «բացասական» խաղաղութիւնը չէ: Դա ներքին անդորրութեան խորը, դրական եւ լիակատար փորձառութիւնն է, որով անհատը պէտք է ակնօրէն դիմագրաւի ամէն մի մարտահրաւէր՝ առակի կարգը անցած խոտի ցողունի պէս ինքի իրեն վերագոնելու ճկունութեամբ: Կատաղի մի փոթորիկ ծառը արմատախիլ կ'անի, բայց խոտի ցողունը մի կողմ կը հակի, միայն որպէսզի փոթորկի գալուց եւ գնալուց յետոյ ուղղուի վեր՝ կրկին ողջունելու արեւին:

Այնուամենայնիւ, մեր անպիջող, յամառ բնութիւնը նախընտրում է ունենալ ուժեղ կաղնու տպարորութիւնը, քան թէ այդ թոյլ խոտի ցողունի կարգավիճակը: Մեր անպիջօ մարդկային հակումը այս է. ինչ որ մէկը հարուածեց քեզ կամ քո խմբին, նրան պատասխան հարուած հասցրու՝: Հարուածի՛ր նրան սաւելի ուժեղ, որպէսզի *նա* մէկ անգամ էլ չփորձի քեզ հարուածել: Դեռ սաւելին. Հարուածի՛ր կասկածելի թշնամուն, նախքան իր հարուածելը: Այսպէս յաւ է: Դու կը խուսափես կամ առնուապէս կը մեղմացնես առաջին հարուածի հաւանական սաւելի շատ վնասը: Բացի այդ, կայ նաեւ երկրային այս խնամութիւնը. ոչնչացրու բոլոր թշնամիներին, որպէսզի այլեւս քեզ չհարուածեն: Թշնամիների հետ այս կերպ վարուելու յաւելեալ առաւելութիւնը այն է, որ թշնամու պատիժը կամ մահը կը վգատացնի միւսներին, եւ նախքան իրենց յարձակումը՝ երկու անգամ կը մտածեն:

Բայց այստեղ ինչ-որ ակնյայտ սխալ կայ: Փոխհատուցելու բնական հակումը իրօք չի գործում: Սա մեր տենչած սաւելի յաւ ապագայ կերտելու ճիշտ եղանակը չէ: Մարդկութիւնը Կայէնից ի վեր հետեւել է այդ քաղաքականութեանը: Եթէ դու չես հաւատում Կայէնի պատմութեանը, ապա՝ առնուապէս այն ժամանակից ի վեր, երբ մենք ծառերից վար իջանք եւ սկսեցինք ուղիղ քայլել: Մենք հետեւում ենք պատասխան հարուած տալու եւ սաւելի ուժեղ հարուածելու քաղաքականութեանը մեր վերջնական ձեւաւորումից ի վեր (այն ժամանակից ի վեր, երբ մենք մենք ենք) - եւ նայի՛ր այն խառնակութեանը, որի մէջ այժմ մենք գտնուում ենք: Բարոյապէս մենք նոյն արարածներն ենք, ինչ որ եղել ենք, այսինքն՝ չորքոտակի: Զարգացման հապարամեակների ընթացքում միակ փոփոխութիւնը, որ մենք կրել ենք, ամէն ինչի պատճառականութեանը բացառրէլու կարողութեան ձեռքբերումն է եւ ասկիւ բառերով մեր կենդանական բնապդների ծածկումը:

Ուրեմն, ի՞նչ է քրիստոնէական նախընտրութիւնը՝ հակառակորդի վրայ մեր նախասիրութիւնները փնտրական բռնութեամբ պարտադրելու փոխարէն: Այդ նախընտրութիւնը արդէն թելադրում է: Ապագան կերտելու համար մենք պէտք պէտք է ապրենք այնպէս, ինչպէս Սուրբ Երրորդութիւնն է թելադրում. այսինքն՝ այն սկզբունքներով, ինչպէս Յիսուս Իր անձը նուիրեց Իր սիրած մարդկութեանը: Սա

կիրառելի է սովորական եւ ճգնաժամային ժամանակներում: Իրականում, եթե սկսեցինք սովորական կերպով կիրառուն, ապա առաջին տեղում ճգնաժամի առաջացման առեւի նուազ հաւանականութիւն կը լինէր: Բրիտանական ընտրութիւնը պէտք է լինի այսպէս. ապրէլ այնպիսի գիտակցութեամբ, որ՝ մենք ճիւղերն ենք, իսկ Աստուած որթատունկն է՝ Յիսուս Բրիտանի մէջ:

Սա չափազանց դժուար կեանք է: Դա հակառակ է մեր բնապական հակումներին, որոնք մենք՝ իբրեւ արարածներ, բնականից ունենք եւ դատապարտուած ենք ապրել դրանցով եւ մեր մարմիններով: Մեզանից իւրաքանչիւրս աշխարհում ունենք մեր սեփական տարածութիւնը՝ սկսած մեր սեփական մարմնի ուրուագծից եւ ապա մեր հետեւողական բնական ցանկութիւնը՝ լցնելու այդ տարածութիւնը մեր կեանքի ընթացքում որքան հնարաւոր է հաճոյքով եւ կամ հաճելի բաներով: Մեր կենսաբանական բնապիւնների հետ մենք ժառանգել ենք ոռնագոյթիներ անողներին ոչնչացնելու հակում: Մեր մարմինները կառաւորէն կռում են, եւ ընդհանրապէս՝ սպառապիւնուած են սպանելու որեւէ օտար տարր կամ մարմին, որը ներխուժում է մեր մարմնի մէջ: Երբ մենք իբրեւ ցեղ կամ ազգ ձեւաւորուեցինք, մեզ ներփակեցինք երկրի վրայ գծուած գծերի սահմաններից ներս եւ այդ գծերի անբռնաբարելիութեան համար կռուելը եւ, անհրաժեշտութեան դէպքում, նոյնիսկ մահանալը մեր սուրբ պարտականութիւնը համարեցինք՝ գծեր, որոնք երբեմն փոխաբերական են, ինչպէս երբ նրանք գծում են մի ցեղի կամ մի հասարակական դատաւարի շուրջ: Մենք վարժուել ենք մեզ յատկանշելու այդ սահմանագծերի եւ նրանց մէջ տեղի ունեցող պատմական իրողութիւնների անունով:

Հենց այդ բնական հակումներինն է, որ Բրիտանական քաղցրութեանը եւ թեթեւութեանը տալիս է լուծի եւ բեռան երեւոյթ: Ինչպէս նախորդ պարբերութեան մէջ արդէն նշեցինք, Նոր Ատակարանը որոշակի կերպով դատապարտում է այս տեսակ հաւատարմութիւնը, մասնաւորապէս, երբ այդ հաւատարմութիւնը իր կարգին չի ստորադրում անհատի բացարձակ հաւատարմութեանը, որը Երրորդութեան Աստծուն տրուած հաւատարմութիւնն է: Առանց այդ ծայրայեղ հաւատարմութեան անհատը չի կարող բաւարարուել իր ունեցած տարածութեամբ կամ հանգստով ու հաճոյքով, որոնցով անհատը լցնում է իր ժամանակը:

Փորձենք նոյն բանը ասել այլ տեսանկիւնից. եթե հարիւր մարդ, որոնցից իւրաքանչիւրը հաւատարիմ մնալով իր ազգին, հաւատարիմ մնան գլխաւորաբար բարոյականութեան անդրանցականութեան Ադրիւրին, ապա ոչ մի պայքար նրանց միջեւ անկուծելի չէր մնայ: Նկատի առնենք երկու եղբայրներ, որոնցից մէկը ասում է միւսին. «Ես եւ դու նոյն արժէքները չունենք: Ես պատրաստ եմ կռուելու քո դէմ՝ մեր ժառանգութիւնից առեւի մեծ բաժին առանալու համար: Ես քեզանից թունով շատ երեխաներ ունեմ եւ առեւի մեծ տան կարիք ունեմ: Դու կարող ես ընտրել իմ դէմ կռուելու տարբերակը, բայց եթե կռուես, շատ պիտի վրջաս»: Միւս եղբայրը կարող է պատասխանել. «Ճիշտ է, մենք տարբեր անհատականութիւններ ենք մրցակցական հետաքրքրութեամբ, բայց մեր հայրը նոյնն է: Նա իմաստուն մարդ է եւ մեզ սիրում է հաւասարապէս: Փոխանակ մեր ուժերը վառնենք իրար հետ կռուելով, առեւի խելացի վարումը չէ՛ նր լինի, եթե նրա միջնորդութեանը դիմենք»: Իրական քրիստոնէութիւնը Սուրբ Երրորդութեան գործօն պաշտամունքի մէջ է: Դա, այլ խօսքով, մարմնի, մտքի, ոգու եւ հոգու մի վիճակ է, որը ոգեշնչուած է այն համոզմամբ, որ մենք բոլորս միասին կայմում ենք Բրիտանի մարմինը եւ դրա շնորհիւ բաժին ունենում շնորհաբաշխ Աստծու սիրոյ իրականութեան մէջ: «Միացած մենք կը յաղթենք» ոչ թէ ուրիշ համայնքների, այլ՝ մեր մէջ աշխարհում նրանց միանալով:

ԱՀԱՐԿՈՒ ՀԱՐՅԸ

Ժամանակն է բարձրացնելու ահարկու հարցը, որը յաճախ կարծում է իբրեւ վճռական հակափաստարկ՝ վերը ասուած ամէն ինչի դէմ: Սա այն է, ինչ որ մի հակառակորդ, թերեւս ինչ որ ապգի պաշտօնական ներկայացուցիչ կարող է հակաճառել:

Դու քարոզում ես հրեշտակների խմբին: Մենք հիմնականում համաձայն ենք առնուապն քո ասածների հոգուն: Խնդիրը թշնամին է: Դու կարո՞ղ ես Եռասուտուածեան տարբերակը քաղաքական պայքարների որոշման համար իբրեւ ելակէտ համարել: Եթէ նոյնիսկ բոլոր (այսպէս կոչուած) քրիստոնէայ ազգերը այդպէս անեն (հրաշքների հրաշքը կը լինի դա) Աւետարանը ընդունեն իբրեւ հիմք իրենց արտաքին քաղաքականութեան, ապա ի՞նչ կ'աւելք աշխարհի մնացած ազգերի մասին: Ի վերջոյ, աշխարհում վեց կամ եօթ մարդուց մէկը առնուապն քրիստոնէայ է: Ի՞նչ կ'աւելք, եթէ ոչ քրիստոնէայ կամ հակաքրիստոնէայ ազգերից մէկը որոշի ոչնչացնել այս կամ այն կամ ամբողջ քրիստոնէայ ազգերը: Ի՞նչ պիտի անենք: Բարձրացնէ՞ք մեր Բարի Լուրի Գիրքը նրանց հաւանական միջուկային վէրքերի դէմ: Բացի դրանից, արդեօ՞ք քրիստոնէական սկզբունքներով արտաքին քաղաքականութիւնը վարելու առաջարկը դէմ չէ եկեղեցու եւ պետութեան բաժանման սկզբունքներին: Եւ սա աւելի թերեւսամիտ առաջարկ չէ՞, յատկապէս եկեղեցու յաճախակի արխանտ պատմութիւնից յետոյ: Տիկնայք եւ Պարոնայք, պարզ փաստը այն է, որ ապգայնապաշտ քաղաքականութիւնը այն լեպուն է, որով ազգերի ղեկավարները խօսում են եւ կամ ակնկալում են այդ լեպունով լսել:

Դա մի ուժեղ հակափաստ է, որը ուժեղ կերպով ներկայացուած է աշխարհի շատ քաղաքական տեսաբանների կողմից: Տանք մի պատահական օրինակ. Ռ. Դ. Կապլանը իր վերջերս լոյս տեսած «Քաղաքական Զինուորներ» գրքում փաստարկում է, թէ Միացեալ Նահանգների արտաքին քաղաքականութիւնը Բրիտանիոյ թեան ապրեցութեան պատճառով շատ մեղմ է եղել, եւ թէ, քանի որ պատմութիւնը ընդարձակում է այնտեղ, որտեղ այն ծառայում է ուժի օգտին, Միացեալ Նահանգները հիմա պէտք է օգտագործեն իրենց փնտրութեան ուժը, վերցնելու համար բոլոր ազգերին իր թելի տակ, նրանց թելադրելով աշխարհի ներդաշնակ կեանքի պայմանները: Այս փաստարկումը յիշեցնում է աշխարհի խաղաղութեան իրականացման հին օրինակ, որը մօտաորապէս կարելի է բնութագրել հետեւեալ կերպ. «Միակ բարի օրէնքները տրուած են միայն մեր ճշմարիտ աստծու կողմից, եւ եթէ ձեր աստուածը ձեզ նոյն օրէնքները չի տալիս, ապա նա կեղծ աստուած է: Մենք բոլորս խաղաղութիւն ենք ուզում: Դրա համար, ենթարկուեցէ՛ք մեր աստծու Բշխանութեանը, որի խօսնակները մենք ենք»:

Այդ մտածելակերպը առաջնորդում է որոշում աննելու անհատի աստծու դատը պաշտպանելու ի գին ամէն ինչի: Սամուէլի գրքի հետեւեալ պարբերութիւնը մեր նիւթին համապատասխանող օրինակ է. «Սամուէլը ասաց Սաուղին. Տէրը ուղարկեց ինձ, որպէսզի քեզ օժեմ թագաւոր իր ժողովրդի վրայ՝ Իսրայէլի վրայ, այժմ, դրա համար լսիր Տիրոջ խօսքերի ձայնը: Այսպէս է ասում բազմութիւնների Աստուածը. Ես յիշում եմ այն ամէնը, ինչ Ամադէկը արեց Իսրայէլին, ինչպէս նա դարանակալեց նրան՝ Եգիպտոսից վերադառնալու ճանապարհին: Հիմա գնա՛ եւ պարտութեան մատնիր Ամադէկին, եւ բացարձակապէս աւերի՛ այն ամէնը, ինչ նրանք ունեն, եւ ոչ մէկին մի՛ խնայիր, այլ ապանի՛ր բոլոր կանանց եւ տղամարդկանց, անչափահասներին եւ ծծկեր երեխաներին, կոտորի՛ր նրանց ունեցած եզներին եւ ոչխարներին, ուղտերին եւ էջերին»:

Անկասկած սա, անհատի կրօնական համոլությունների տարածման խոչընդոտները վերացնելու անսովոր եւ կոշտ տարբերակ է: Բրիտանականները, մասնատորաբար Արեւմտեան Բրիտանականները, ունեն կամ առնուապ ունեին Չինությունեայ Եկեղեցու վարդապետութիւնը: Բառարանը «Չինությունեայ Եկեղեցին» սահմանում է իբրեւ «քրիստոնէական եկեղեցին՝ երկրի վրայ, որը համարում է ներգրաւուած յարաւոն պատերապմի մէջ, իր թշնամիների դէմ՝ չարի յօրութիւնների դէմ»: Մենք գիտենք այդ պատերապմի ընթացքում պատահած այն բարբարոսական անկարգութիւնները, որին եկեղեցին դիմեց: Թշնամիներն էլ միշտ տարբեր կրօնի մարդիկ չէին: «Եկեղեցին» յաճախ խիստ կոկիկ կերպով հագնուած ընդհանրական եւ ուղղափառ նուիրապետութեան անձեր էին, մինչ Սառնանան ցոյց տուեց իր յօրութիւնը մի անձի մէջ, որ Սուրբ Գիրքը տարբեր կերպով մեկնաբանեց եւ նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ տարածելու իր համոլությունները: Նա խարոյկի վրայ այրուեց - իր իսկ բարիքին համար: Իր հոգեվարքը կը մաքրի իր հոգին, եւ այդ խեղճ թշուառը առիթ պիտի ունենայ ի վերջոյ արքայութիւն գնալու:

Բոլոր գլխաւոր կրօնների պատմությունները արձանագրել են այսպիսի չափապանցություններ: Միեւթարությունն այն է, որ այսպիսի անկարգությունները մատնում են կրօնների աւելի ակնի նպատակները, որտեղ նրանք պատահեւ: Ընդհանրական եկեղեցու կողմից կատարուած դաժանությունները ոչ թէ կատարուել են ըստ Բրիտանի սկզբունքների, այլ Բրիտանությունեայ դրժմամբ: Նոյնը ճիշտ է նաեւ միւս յարգելի կրօնների համար: Այս կամ այն կրօնի հագուաւոր հագնողներից ոչ բոլորն են, որ կրօնի ճիշտ գործադրողներ են:

Վերադառնալով այս հատուածի սկզբում նշուած առարկութեանը, նրանք, ովքեր արտաքին քաղաքականութիւնը քրիստոնէական սկզբունքների հիման վրայ կառուցելը գտնում են անյանձնարարելի, շփոթում են «այն ինչ պէտք է անելը»՝ իրականում արդէն կատարուածի հետ: Այն փաստը, որ մարդկանց Կանգուածները շարժում են կրքերով, ամենեւին էլ չի յանգեցնում այն եպրակացութեան, թէ միջապգային յարաբերություններն էլ պէտք է առաջնորդուեն այդ կրքերով: Անհրաժեշտ է նաեւ ճիշտ գնահատել, այս պարագային՝ քրիստոնէական կրօնի գործօնը, ապրակը:

Միւս կրօնների նման, քրիստոնէութիւնը ամբողջ աշխարհը շահելու առաքելութիւն ունի: Բայց սա իբրեւ աշխարհը տիրապետելու մտադրութիւն պէտք չէ մեկնաբանուի: Սա պարզապէս ճշմարտութեան կողմից ներգրաւուելու մի պարագայ է: Անհնար է ներգրաւուել ճշմարտութեան կողմից եւ բարձրաձայն ջայտարարել այն: Սա այդպէս է նոյնիսկ փոքր հարցերում: Դժուար է իմանալ մի գաղտնիք, եւ ցանկութիւն չունենալ քո ընկերների հետ այն համատեղ բաժանուել: Բրիտանությունը ջանում է աշխարհը գրաւել ճիշտ ձեւով, որովհետեւ Բրիտանությունը չի կամենում տիրել աշխարհին այն մտադրութեամբ, որ յետոյ նրա վրայ պարտադրի մի շարք օրէնքներ կամ Ռութ Բենեդիկտուսի ասած խօսքով՝ ինչ-որ մշակոյթի ուղղութիւն: Եկեղեցու առաքելութիւնն է մարդկանց բացալայտել Աստծու էութիւնը, որ ամէն մի մարդկային էակի փրկութեան համար չարչարուեց եւ մահացաւ: Որեւէ տեղ մարդկային ապաւորութեան յարգանքը ամբողջովին համատեղելի է այս առաքելութեան հետ, եւ որեւէ օրէնք քրիստոնէական տեսանկիւնից լաւ օրէնք է այնքան ժամանակ, որքան սէրը կարող է ճշմարտաբար ասուի իբրեւ այդ օրէնքի իրագործում: Բրիտանություն միւս կրօններից ոչ մէկի հետ վեճ չունի: Այն ինչպէս իր, այնպէս էլ միւս կրօնների համար ճանաչում է իրաւունքը եւ համոլելու պարտաւորութիւնը: Համոլել սիրով եւ երբեք փորձութեան չենթարկել, չհրապուրել եւ չստիպել:

Բայց հակառակորդները նուազ անհանգստութիւն են պատճառում Բրիտանությունները, քան քննադատները, որոնք ականջ են դնում ինչ որ քրիստոնէութիւնը ասում է, որպէսզի մեթոճն իբրեւ անկատար եւ անտեղի հարց:

Այսպիսի քննադատները, որոնք յայտնում են, որոշ չափով իրատու են, որոշ չափով իրատու են: Կարիք չկայ հասարակական ընդհանուր ուղղությունների սրամիտ դիտող լինել, հասկանալու համար որ մեր Արեւմտեան մշակույթը «ֆիլիկական» է հետապնդում, այն իմաստով որ ֆիլիկական կարիքների բաւարարումը դառնում է աւելի ու աւելի մեր գերինդիյոր: Անողորմ մրցակցություններ, «նա ի՞նչ արժէք ունի» հարցի նման հարց, (երբ մարդու արժէքը իր դրամի քանակն է), սեռական յարաբերություններ, բռնություն, նորաձեւություն, կոսմետիկական վիրահատություն, թմրադեղերի գնի բարձրացում, իրաւական եւ առողջապահական հոգատարութեան համար վճարուած բարձր գումարներ, կատակաբաններին եւ մարպիկների վճարուած շատ բարձր անսականներ, գրեթէ ամէն ոք՝ ներառեալ հոգեւորականությունը, առնում եւ վաճառում են արժէքաթղթեր եւ բաժնետոմսեր, երաժշտական յաջողություններ՝ լուրջ դրամաների դիմաց, բնակչութեան հասարակական բոլոր խաւերի լսած գոեհիկ երաժշտությունները, տաս միլիարդ դոլլար տարեկան ծախսում է պոռնկագրութեան վրայ, Մադիսոն պողոտայ, կինոների առատություն, ուր ծագած հակասությունները լուծում են հրացանով եւ կամ քթին հասցում հարուածով, ծերերի անտեսումը եւ խաբելը, լայն ընթերցումը սիրային վէպերի, «Ինչպէս կատարել» կոչում գիրքը՝ ներառեալ ինչպէս օգտագործել կրօնը լաւ պալու, աւելի առողջ ապրելու, եւ աւելի երկար ապրելու համար, այս բոլորը հոգեւոր վիճակից հեռանալու յայտարարներ են:

Նայիր մասնատորապէս սպառելիութեան երեւոյթին: Մեր մշակույթում առեւտրական յայտարարություններից եւ գովապոսներից աւելի ինչ կայ համատարած: Բո հեռուստացոյցը, համակարգիչը, քո կարդացած անագրերն ու օրաթերթերը, քո փոստարկղում գտնուած թոռցիկներն ու համացանկերը, յայտարարությունների տախտակները, դու չես կարող անտեսել այս բոլորը, երբ քաղաքի մէջ մի տեղից մի ուրիշ տեղ եւ գնում, կամ՝ մի քաղաքից մի ուրիշ քաղաք: Դրանցով միայն մակերեսի մի մասը օգտագործուած է խելացի, օժտուած անհատների կողմից հարուստ կապմակերպությունների ծառայություններում, որոնք ստիպում են քեզ մի բան գնել: Առեւտրական յայտարարությունները առ հասարակ ցոյց են տալիս կեանքի միայն մի հատում, որտեղ ամէն ինչ կարգին է, բացի գովապոսուած իրերից: Դու կարող ես գնել այն, եւ քո կեանքը քո ցանկացածի պէս կատարեալ կը դառնայ: Գովապոսի գինը սպառողներին է փոխանցուել: Այս նշանակում է, որ դու վճարում ես առեւտրական կապմակերպություններին, որպէսզի նրանք կարողանան խաբել քեզ՝ քիչ թէ շատ լինելով նրանց սպառողներից մէկը:

Այժմ, մեր մշակույթի այսպիսի որոշ նշաններ նորություն չեն: Մարդիկ միշտ հակում են ունեցել հեշտութեան եւ ժամանցների: Juvenal-ը տեղեկացնում է, թէ Հռոմէական կայսրութեան Իշխանաւորները գիտէին թէ ժողովուրդը հիմնականում երկու բան է ուզում. *panem et circenses* (հաց եւ կրկէս): Դրամի սէրը նոյնպէս պատմութեան նման հին է, այդ իսկ պատճառով այսքան պոռնագրումներ կան դրա դէմ տարբեր տեսակի բարոյական եւ կրօնական հեղինակների կողմից: Իսկ մարդիկ միշտ գնահատում են բարձր դիրքերը, հանգստութիւնը եւ պերճանքը: Այն ինչ նորություն է, դա վերը թուարկուած ապրելակերպի ուղղակի կամ անուղղակի վաւերացումն է ներկայիս գերակշռող մտաւորականութեան աշխատություններում: Այս ամէնը պարզացած երկրներին վերածում են մի հսկայական առեւտրի կենտրոնների, եւ այս շուկայական պայմաններով մտայնութիւնը նպաստաւոր չէ երկրի գործերին, որտեղ պիտի տիրի կրօնամէտ բարձր բարոյականութիւն: Բաւական ժամանակ է, որ սուրբը չի եղել մեր մշակույթի տիպարը: Մեր հասարակութեանը նոր ուղղություն տուող մարդիկ «գիտնական»ն է կամ «մասնագէտ»ը: Խորապէս խռովիչ հարցերին պատասխաններ գտնելու համար, մենք այլեւս չենք դիմում Աստուածաշնչին եւ կամ եկեղեցու կանոններին: Մի բան ճիշտ է համարում, երբ «ուսումնասիրութիւն»ը կամ նոյնիսկ

վերջին «հարցաքննություններ»ը ցոյց տան, որ դա է պարագան: Երիտասարդները այլևս չեն ուզում լինել Լինքոլն: Նրանք ուզում են լինել Գեյթս: Մարդիկ հիացած են նրանցով, ովքեր մրցում են ատելի դրամ շահելու համար եւ յաջողում դրանում:

Այս ընդհանուր ուղղությունը անդառնալի՝ է: Հաւանաբար, ո՛չ: Բայց փտահաբար, այն չի վերանայ՝ առանց իր հետքը թողնելու մեր մշակույթի վրայ: Բայց արդեօ՞ք դա նշանակում է, որ մեր իմացած եկեղեցին պետք է ենթարկուի արմատական փոփոխությունների: Այո՛: Բրիտոնությունը անտեղի՝ է: Ո՛չ: Բրիտոնությունը սիրոյ գետինն է եւ արդարացումն ու սէրը կը լինեն այնքան ժամանակ, որքան որ մարդկային էակը կը շարունակի մնալ մարդկային էակ - օտարուած եւ անձկօրէն ցանկութիւն ունենայ պատկանելու, յարաբերուելու:

Նոյնիսկ այն ժամանակ, թշնամին գուցէ շարունակի վիճաբանել եւ ասել, Բրիտոնությունը անտեղի է իբրեւ հիւր ընդունել եւ դրա վրայ կատարել քաղաքական եւ ուրիշ գործարք, երբ թշնամին վճռել է ամէն գնով՝ ներառեալ փնտալ ընդդիմութեամբ, ձեռք բերել ատելի ուժ, ատելի բնական հարստութիւններ կամ ուրիշ մի հողատարածք: Վերադառնալով վերը տուած օրինակին՝ ենթադրենք թէ առաջին եղբայրը ասում է. «Իմ համար միեւնոյն է, թէ մեր հայրը սիրում է մեզ, եւ պիտի չհամաձայնեմ իր իմաստութեան հետ: Ես գիտեմ այն, ինչ եւ ուզում եմ եւ ես պիտի ստանամ այն: Թող սա լինի քեզ համար զգուշացում»: Դիմառնելով այս մարտահրաւերին՝ ի՞նչ պետք է անի երկրորդ (բարի բրիտոնեայ) եղբայրը:

Այս հարցի հետ մենք դէմ յանդիման ենք կանգնում՝ միւս երեսը դարձնելու հրահանգին, որը հաւանաբար, Բրիտոնութեան բարոյագիտութեան մէջ ամենատարբերից է՝ ներառեալ բարոյական հարցերը՝ լինելով նախաձեռնողը կամ թիրախը սահմանափակութեան:

Անգլերէնից թարգմանեց՝

ՅՈՎՆԱՆ ՍՐԿ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ